

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հարցեր քաղաքակին ընտրութիւնների առիթով, — Ընտրողական սկզբունք.
ների, — Աղջութիւնների խնդիրը և հասարակաց կարծիքը, — Կուսակցութիւնների

Քաղաքային ընտրութիւնների համար պատրաստութիւնները, հարձակ կարելի է ասել, գրեթէ բացաւապէս կլանեցին Թիֆլիսի բոլոր շրջանների ուշքն ու միտքը եւ այդ տեսդային դրութիւնը կը շարունակւի մինչ ընտրութիւնների որը, մայիսի 16-ը, աւելի ու աւելի սաստկանալով:

Խնչն էր կազմում արդեօք գլխաւոր զսպանակը այդ ամեն գործունէութեան: Ամենից առաջ աղջութիւնների խնդիրը, երկրորդ կուսակցական գոյները, երրորդ՝ գլխաւոր գործիչ անձնաւութիւնների փոխադարձ յարաբերութիւնները:

Անցեալ անգամ «Մուրճ»-ը վստահութիւն ունեցաւ պարզ դնել աղջութիւնների խնդիրը և միջոց առաջարկել նորան լուծելու: «Մուրճ»-ի առաջարկութեան հիմնական միտքը կազմում էր այս թէ, որպէս զի այլ և այլ աղջութիւն վիրաւորւած չզգան, և որպէս զի հեշտացնեն բուն կուսակցական գաղափարական համախմբումները, պէտք է ձայնաւոր ընտրել ամեն աղջութիւնից այնքան թւով, որքան իւրաքանչիւրին իրաւունք է տալիս նորաքնակիների շատութիւնը, համեմատած միւս աղջութիւնների հետ.

Եւ եթէ մենք այդ կանոնից թոյլ էինք սալիս բացառութիւններ անել, այս ու այն անձերի համար այդ միայն այն դէպքերում, երբ բոլոր աղջութիւններից կուսակցութիւնների ներկայացուցիչները համաձայն կը լինեն այդպիսի բացառութիւններ թոյլ տալու:

Պրոպորցիական հաշւով ձայնաւորներ ընտրելու միաբը իւր հիմքում ունի արդարութեան մի գաղափար, դէսի որը չէր կարելի անտարեր մնալ: Ահա ինչով պէտք է մեկնել այն, որ մեր արծարծած միտքը քննադատութեան առնւեց մամուլի մէջ, բայց աւելի ևս՝ Թիֆլիսի բոլոր կուսակցական ժողովների մէջ:

Այդ ժողովներից մէկը առանձին հետաքրքրութիւն ներկայացրեց, իր Թիֆլիսի հայ, վրացի և առւս ամբողջ մամուլի ներկայացուցիչների ժողով, որի առաջին երկուսը նւիրւած էր այդ արդէն այրւող դառած խնդրին: Ես իրաւոնք չեմ համարում անուններ տալ, իրաւոնք չեմ համարում յայտնել թէ ով ինչ կարծիքներ յայտնեց, բայց այսքանը թոյլատրելի եմ համարում հաղորդել, որ առաջին նիստում, բաղկացած 14 հոգուց, յօդուա պրոպորցիայի էին եօթ հոգի, զանազան խմբագրութիւններից, և դէմ՝ նոյնպէս եօթ հոգի: Իսկ երկրորդ ժողովում, ուր քւէարկութեան մասնակցեցին 21 հոգի, դէմ յայտնեցին 10 հոգի, յօդուա պրոպորցիայի՝ 11 հոգի: Որպէս զի աւելի պարզւի այլ և այլ շրջանների վերաբերմունքը դէսի խնդիրը, պէտք է աւելացնել, որ ժուսաց օրգանների ներկայացուցիչները գրեթէ միահամուռ հակառակ վերաբերմունք ցոյց տեխն, մինչդեռ պրոպորցիայի օգտին արտադայտեցին գլխաւորապէս հայ և վրացի մամուլի ներկայացուցիչները: Իայց մտնաւանդ յիշելու է այն, որ մի քանիսը, հակառակ ձայն տալով պրոպորցիայի սկզբունքին, այնուամենայնիւ հարկ են համարում յայտնել, որ պէտք է ցուցակներ կազմելիս՝ աշխատել կարելիին չափ մօտենալ նոյն այդ սկզբունքի նպատակին, այսինքն եթէ ոչ մաթեմատիկական, գէթ մօտաւորապէս պրոպորցիական թւով կանդիդատուներ առաջարկել ամեն ազդութիւններից:

Ցոյց տալու համար, թէ ինչպէս շատերը, ձե ացնելով իր թէ մեր պահանջը չեն ընդունում, բայց իրանց ստիպւած են զգում առաջադրած սկզբունքին յարմարւելը: Ես առաջ կը բերեմ, իր օրինակ, «Արձագանք»-ը: Ընթերցողները իրանք այս բոսէին կը տեսնեն, որ այդ թերթը, հերքելով պրոպորցիայի սկզբունքը, պահանջում է նորան ընդունել:

«Արձագանք»-ը իւր 47-րդ №-ում, առ. 25 ապրիլի, «Քաղաքացին ընտրութիւնների առիթով» յօդածում քննութեան առնելով հին վարչականների (Ազ. Մատինեանի առաջնորդութեամբ) կազմած կանդիդատական ցուցակը, ազգութիւնների խնդրի նկատմամբ հետեւեալն է գրում։

Ազգութեան խնդրի վերաբերութեամբ, քաղաքալին ինքնավարութեան գործում, մենք միանգամայն համամիտ չենք ան անձանց, որոնք պնդում են թէ ապագակ խորհրդի մէջ ամեն մի ազգութեան պատկանող իրաւասուները պէտք է մաթիւմատիկական վարաբերութիւններ կավացնեն աղդ ազգութեան քանակութեան հետո։

Այսպիսով ուրեմն «Արձագանք»-ը հակառակ է պրոպրցիալի կանոնին Բայց աեսէք այժմ նոյն տողերի շարունակութիւնը։

«Սակայն մի անհերքելի ճշմարտութիւն է որ աչք սկզբունքի որոշ աստիճանի անտես անելը, մի ալ, գուցէ ամլի վնասակար ծագրահղութիւնը... ընդունելով միմիանը եօթն ներկավացուցիչ ունիու-

Եւ ապա՝

«Քննելով ալս աեսակէտից ցուցակը (ուղում է ասել քննելով ցուցակը ալս աեսակէտից) մենք չենք կարող չափանել մեր զարման քը, որ վրաց ազգութիւնը... ընդունելով միմիանը եօթն ներկավացուցիչ ունիու-

Հարց՝ ինչու գուք զարմանք էք յացնում, որ Մատինեանի ցուցակում վրացիք միայն եօթ հոգի են, քանի որ գուք ինքներդ յայտարարում էք թէ ովրոպորցիալի կանոնը չեք ընդունում։ Մատինեանը չի ընդունում ացդ կանոնը, և ացդ պատճառով նորա կուսակցութիւնը վրացիներից միայն եօթ հոգի է նշանակել, և ինչու եօթ հոգի և ոչ աւելի՞ այն պարզ պատճառով, որ Մատինեանի կուսակցութիւնը վրացիների մէջ եօթ հոգի է տեսել, իբր արժանի ձայնաւոր լինելու, ի հարկէ՝ իւր աեսակէտից։ Խսկ դուք զարմանում էք ացդ եօթը թւի վրաց և շարունակում էք՝

Ալարծում ենք որ ալ թիւը (եօթ) կարող է կրկնապատկել և ու ապատկւել և ինքնավարութիւնը զորանից միմիան և եթ կը շահէրու-

Այսպիսով, ուրեմն, «Արձագանք»-ը թոյլ է տալիս որ վրացիներ լինեն եօթից եռապատիկ աւելի, որ ասել է թէ քսանումէկի Ես չեմ կարծում թէ «Արձագանք»-ը միմիայն ոճի համար ասում լինի թէ վրացիք կարող են լինել եօթից եռապատիկ աւելի. Ես չեմ կարծում թէ «Արձագանք»-ը վստահանար ասելու, թէ վրա-

ցիք թող լինեն դումայում եօթից քառապատիկ, հնգապատիկ, եօթնազարդիկ աւելի, այսինքն 28, 35 կամ 49 հոդի: «Արձագանք»-ը կանդ է աւնում եռապատիկի վրայ, որով նա սահման է դնում վրացիների պահանջներին: Այդ եռապատիկը մոտածւած խօսք է: «Արձագանք»-ին յայտնի է որ Թիֆլիսում վրացիք կազմում են բոլոր բնակիչների թւի մօտաւորապէս մի քառորդը միայն. ձայնաւորների թիւը լինելով 80,—վրացիները, պրոպորցիայի կանոնով, իրաւացի կերպով կարող են պահանջել մօտաւորապէս 20 ձայնաւոր իրանց աղջութիւնից, այսինքն այնքան, ինչքանի վրայ որ կանդ է առնում նաև «Արձագանք»-ը:

Այդ արդէն նշանակում է ընդունել պրոպորցիայի սկզբունքը: Եթէ այդ ընդունելութիւնը կատարում է «Արձագանք»-ի կողմից պատէպատ լնկնելով, դրանով ոչինչ չի փոխւում, այլ միայն ապացուցում է որ կան մարդիկ, որոնք ցոյց տւած ճանապարհով դնալու ժամանակ էլ պահանջ են զգում գլուխները պատերին խփելու:

«Տարագյուի քննադատը քննութեան առնելով մեր անցեալ Խ Յ-ում տպած յօդւածը քաղաքային ընտրութիւնների մասին, յայտնում է թէ նա չի ընդունում մեր առաջարկութեան դիսաւոր հիմունքները, և վերջ ի վերջոյ գալիս է այն եղրակացութեան, թէ մեր առաջարկած ձևը պէտք է լնդունել:

Նա, որ ամբողջ սիւնեակներ է նւիրում ապացուցանելու համար, թէ Թիֆլիսում աղջային խնդիր չը կայ քաղաքային ընտրութիւնների գործում, նա, որ հիմունքներ է բերում ցոյց տալու համար թէ ձայնաւորների թւի մէջ այլ և այլ աղջերի համար չը պէտք է պրոպարցիական յարաբերութիւն լինի, մեր նոյն այդ կրիտիկոսը հետուեալ տողերով է վերջացնում իւր այդ քննութեիւնը՝

ԱՅՍ Ե թէ արդէն անկարելի է խոչս տալ ազգութեան դիւրազգաց ինսալինկալից, անկարելի է առ ալժմ հասնել լիապէս առանց աղջութեան խտրութեան ցանկալի գործունէութեանը քաղաքային գործերի մէջ, թող այդ աղջութեան խնդիրը մէջ գալ միայն ամեն մի՝ ռամկական կամ պահպանողական կուսակցութեան շրջանում, իբրև շատ կողմանակի մի գործօն-ֆակտոր. Ե թող աղջէն ամեն մի ամբողջացած կուսակցութիւն գասաւորէ իր ընտրելիների թիւը համեմատ ազգաբնակչութեանց ամեն մի ամբողջացած կուսակցութիւն գասաւորէ իր ընտրելիների թիւը:

Ահա ինչին են ասել՝ էլի էն զելինկիկո...

Վիճել, վիճել, չընդունել ազգութիւնների հաշտութեան հիմունքը և վերջը գալ ու խորհուրդ տալ որ ամեն մի կուսակցութիւն իւր ընտրելինների թւի մէջ մոցնի այլ և այլ ազգութիւններ, նոցա համեմատական մեծութեան չափով,—ահա թէ ինչին են ասում «մոռերի մթութիւն», հակասութիւն և յամենացն դէպս անյաջորդականութիւն:

Բայց, ի դէպս, այդ ինչ եթէ է որ մտել է վերը առաջ բերած նախադասութեան մէջ: Ինչպէս թէ՝ «Եթէ արդէն անկարելի է խոյս տալ ազգութեան դիւրազզաց ինստինկտից», կամ «Եթէ անկարելի է առ այժմ հասնել լիապէս առանց ազգութեան խորութեան...» և այլն: Ումն էք թողնում լուծել այդ եթէ-ները, հարցնում ենք «Տարազ»-ի քննադատին: Հարցը ուղղակի ենք դնում՝ կամ կայ ազգութիւնների խնդիր և կամ չը կայ. մեր ամբողջ յօդւածը հիմնած է այն դիսոզութեան վերայ, որ հայերն ու վրացիք առանձին-առանձին աշխատում են իրանցից կարելին չափ շատ ներկայացուցիչներ ունենալ քաղաքային դումայում, և գտել ենք, որ ազգային ներկայացուցչութեան այդ խնդիրը մինչ այժմ մթնացրել է և այժմ էլ մթնացնում է բոլոր ուրիշ խնդիրները: Ահա ինչու մենք խորհուրդ էինք տալիս վերացնել այդ խնդիրը մէջ տեղից, բայց ոչ թէ ուրանալով նորա գոյսութիւնը, այլ արդարութեան վերայ հիմնած մի սկզբունքի հետեւլով, այն է որ Թիֆլիսի գլխաւոր ազգութիւնները մօտաւորապէս ճիշդ համեմատական տոկոսներով ներկայացուցիչներ ունենան քաղաքային խորհրդարանում, առաջարկութիւն, որին Դուք ինքներդ յարում էք, որքան էլ աշխատեք այլ և այլ եթէ-ներով պօղել այդ:

P. S. Այս տողերը գրելուց յետոյ իմ միտս եկաւ որ «Տարազ»-ում, մի քանի ժամանակ առաջ, տպւած էր մի յօդւած քաղաքաքային ընտրութիւնների մասին: Եւ ես ահազին զանազանութիւն գտայ այժմեան դրւածքի և այն առաջին յօդւածի մոքի և ուղղութեան մէջ:

Նոյն այն առաջին յօդւածում պ. Լիսիցեանը վկայում է ազգութիւնների կուի գոյսութիւնը, այն էլ շատ որոշ խօսքերով: Եւ այդպիսով, ասում էր պ. Լիսիցեանը, քաղաք. խորհրդի և կից

հիմնարկութիւնների մէջ գաղտնի, սակայն և շատ անգամ բացարձակ կերպով բոյն էր դրել անհամակրելի կուր երկու աղքութիւնների մէջ ի վես քաղաքի անմիջական շահերից:

«Այս տարի ականջ դնելով մեր շուրջը լսող խօսակցութիւններին, նկատել ենք որ այդ օրինակ յակումները օրէցօր աճում են և պէտք է մեծ դեր խաղան ապագայ ընտրութիւններին, խճճելով առանց այն էլ բարդ հանգամանքները»:

Բայց երբ որ «Մուրճ»-ը հաշտութեան մի միջոց է առաջարկում դրացի աղքերի համար, մի միջոց, որին, ինչպէս վերը ցոյց տեմք, յարում է և ինքը «Ճարազ»-ը, նոյն այդ «Ճարազ»-ը, հակառակ ամեն տրամաբանութեան, այդ համարում է՝ «աղքութիւնների թշնամութեան սկզբունք»...

Մի նկատողութիւն ևս: Մենք առաջարկել էինք, որ այլ և այլ կուսակցութիւնների ներկայացուցիչներից բաղկացած մի մասնաժողով որոշի, սոտատիստիկական վերջնագոյն տեղեկութիւնների հիման վրայ, աղքութիւնների պրոսորցիական մեծութիւնը Թիվվիսում: Բացի այդ, մենք ասել էինք որ նոյն այդ մասնաժողովը մասնանիշ լինի այն նախկին գործիչների վրայ, որոնց վերընտրելը անպայման օգտակար կը համարի, որպէս զի բոլոր կուսակցական ցուցակներում նոքա լինեն: Մենք ասել էինք որ այդ սակաւաթիւ անձերը կարող են դուրս լինել պրոսորցիայի հաշւից: Այժմ «Ճարազ»-ը կարծում է թէ լորանով մենք խախտում ենք մեր իսկ առաջարկած պրոսորցիայի սկզբունքը: Դորան պատասխանելը դժւարին չէ: Մենք չենք պարտաւոր ացնում մասնաժողովին ան պատճառ առ նշանակել որոշ թւով թեկնածուներ պրոսորցիայից դուրս ինչ թւով էլ որ լինի, ուրեմն այս դէպքում մեր սիստեմով պրոսորցիան կարող է և կատարեալ լինել: Այդ մէկ Երկրորդ, որ մասնաժողովից միաձայն իրը գովելի ձայնաւորներ ճանաչւածները կարող են լինել հայերից, վրացիներից և ուներից պրոսորցիական թւով: Ուրեմն նաև այս դէպքում պրոսորցիան կը լինի կատարեալ: Երրորդ, և ամենազլիսաւորը սա է. եթէ բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները միաձայն ընդունեն մի քանի անուններ իբր անպայման ընտրելի ամեն պրոսորցիայից

դուրս, այն ժամանակ էլ ինչում կարող է որ և է վէճ կայանալ? Եթէ բոլոր կուսակցութիւնները համաձայն են մի քանի անձերի համար պրոպրոցիայի կանոնից բացառութիւն անել, էլ ով կարող է պահանջել, որ մաթեմատիկական պրոպրոցիայի ճշգութիւնը պահպանած լինի: Զէ որ պրոպրոցիայի կանոնը, որ մենք առաջարկել ենք, միմիայն նրա համար է, որ ազգութիւնների վէճ չը լինի. ուրեմն երբ հէնց բոլոր ազգութիւնների կուսակցութիւնները ամենենին չեն վիճում մի քանի ընտրելագոյնների համար, էլ ինչում կարող է կայանալ որ և է «հակասութիւն»:

Միմիայն միտք պարզելու համար ես ընդունել էի թէ ընտրելագոյնների թիւը թող լինի 20 հոդի: Բայց չէ թէ այդ թիւը միայն միտք պարզելու համար էի վերցրել, և քանի որ «անվիճելի» լաւ ձայնաւորների թիւը որոշելը մեր սիստեմով կենտրոնական յանձնաժողովին էր թողած, չէ որ այդ յանձնաժողովի համար «անվիճելիների» թիւը կարող է հաւասար լինել կամ զերօի, կամ մէկի, կամ երեքի, հինգի և այլն, նայած թէ որքան հոգու անունների համար բոլոր կուսակցութիւնները թոյլ կը տան բացառութիւն անել ընդհանուր կանոնից: Խսկ որտեղ ամենքը համաձայն կը լինեն, այնտեղ «հակասութիւնների» մէջ բռնելու համար յոյս ունիմ որ ոչ ոք հարկ չէր համարիլ դիմել քննադասների օգնութեանը:

Տեսնենք այժմ թէ քաղաքային ընտրութիւնների համար ինչ կուսակցութիւններ է արտադրել Թիֆլիսի մթնոլորդը:

Կուսակցութիւնների թիւը կարելի է որոշել մեծ ժողովների թւով: Արդ, ազգպետներ ինձ յացտնի են հետեւեալները. 1) Հին վարչականների կուսակցութիւն, իւր նիստերով «Դւորցովայա նոմերա» հիւրանոցում. 2) Վրացական-Շաչաւձաւաձեան կուսակցութիւն. 3) Վրացական-Մաչարէկեան կուսակցութիւն. 4) Հայ երիտասարդական կուսակցութիւն. 5) Ժողովներ՝ մամուլի ներկայացուցիչների և կակազ» հիւրանոցում:

Հին վարչականների ժողովները համարւում են կարեորագոյնը բոլորից, իբր մի կուսակցութիւն, որը ամենից շատ ձայներ ունե-

ցող է կարծւում: Խնչ կուսակցութիւն է դա. ինչով է նա զեկավարում ևս նեիրւած չեմ այդ հարցերի ուսումնասիրութեանը, հետևաղէս դա՝ այդ ժողովների զեկավարների գաղտնիքն է: Բայց նորա բնաւորութիւնը բաւականին կը պարզէ, եթէ ասելու լինենք, որ այդ կուսակցութիւնը չունի իւր մտքերի թարգման որ և է օրգան: Գուցէ այդ նրանից է, որ այդպիսի մի կուսակցութիւն չի էլ կարող անկախ թերթերի մէջ իւր օրգանը գտնել, եթէ ենթադրենք, որ ամեն մի թերթ պէտք է ներկայացնի որ և է գաղափարի գէթ մի մասնիկ: Այդ կուսակցութիւնը կազմւում է գլխաւորապէս պլուտոկրատիայից կամ նորա հետ մեծ կապ պահպանողներից: Նա նայում է իւր անդամների վրայ, ինչպէս որոշ քանակութեամբ ձայն ունեցողների վրայ ցենզի տէր ժողովրդի, բայց գլխաւորապէս վաճառական դասակարգի մէջ: Այդ կուսակցութիւնը նայում է դումայի վրայ մասամբ կապալառուների տեսակէտից մասամբ պատրիկների տեսակէտից: Մի անթափանցելի պարսպով նա իրան ապահովել է թարմ ոյժերի հոսանքից. թարմ ասելով ես չեմ հասկանում նոր դէմքեր, որովհետեւ մի նոր դէմք կարող է հնի հետ ամեն տեսակ կապերով կապւած լինել. բայց ես խօսում եմ նոր հոսանք ներկայացնող տարրերի մասին, որոնք կարող կը լինեն որ և է գաղափար մտցնել դումայի գործերում, այլ վերաբերմունք ցոյց տալ դէպի ժողովրդական շահերը, սերունդներ, վերջապէս, որոնք կարօտեն գործնականապէս ծանօթանալու քաղաքային գործառնութիւնների հետ և գործնականապէս կապւել այն տեղի հետ, որի մթնոլորդում նոքա ապրում են:

Պէտք է խոստովանած, որ հայ մեծամասնութիւնը միշտ ապատիա է ներշնչել հայի երիտասարդ ինտելիգէնցիային: Եւ հէնց այդ տեսակէտից մի ընդհանուր վաստակ պէտք է համարել այն հանդամանքը, որ 1891 թւականին վրացի ինտելիգէնցիային յաջողւեց որոշ չափով յաղթանակ տանել այն ժամանակւայ ընտրութիւններին և մի ընդդիմադիր կուսակցութիւն կազմել դումայում: Եւ ես յուսով եմ, որ այս անգամ այդ վաստակը կը պատկանի արդէն հայ երիտասարդ ինտելիգէնցիային, որին հիմնաւորապէս արհամարել են հին դումաների հայ մեծամասնութիւնները:

Գաղաքային ընտրութիւնների առիթով ժողովներում փոխանակած կարծիքներից ես գտնում եմ առանձին բացատրութեան արժանին այն, որ վերաբերում է անւանացուցակ կազմելուն ըստ ուղղութիւնների: Գործիչների մի բաւականին խոշոր մասը ոչ ուղղում է լսել ուղղութիւնների մասին, ոչ էլ ուղղում է հասկանալ նոցա էութիւնը: Պէտք է ընտրել մարդիկ որ ունենան այս ու այն յատկութիւնները, ասում են նոքաւ: Պէտք է ընտրել ճայնաւորներ ըստ իրանց մասնագիտութեան, ասում են միւսները: օրինակ՝ այսքանը վաճառական, այսքանը բժիշկ, այսքան՝ իրաւաբան, այսքանը՝ ինժիներ—ճարտարապետ և այլն: Բայց երբ դուք այդ բոլորի դիմաց դնում էք այս պահանջը, որ ընտրածները իրանց մեծամասնութեամբ ունենան որ և է որոշ գոյն, որոշ ուղղութիւն, նոքա պատասխանում են թէ մենք քաղաքական կեանք չունենք, որ ունենանք նաև որոշ կուսակցութիւններ:

Գալով քաղաքային ընտրութիւններին, ես գտնում եմ թիւրիմացութիւնների վրայ հիմնած համախմբումներ: Եւ այդ կողմից դեռ էլի թույլատրելի եմ համարում «Դւորցովայա նոմերներին ժողովները, քան «Կաւկազ» հիւրանոցում գումարւող խմբագրութիւնների ժողովները: Այսեղ թիւրիմացութիւնը ոչ թէ ժողովներին մասնակցողների իրար մէջն է, այլ այդ ժողովի կազմի, և նորան հետևող ժողովրդի մէջ: Խսկ խմբագրութիւնների ժողովում թիւրիմացութիւնները հէնց նորան մասնակցողների իրար մէջն են: «Մուրճ»-ի ընթերցողներին պարտականութիւն եմ զգում ասել թէ այդ ինչ խմբագրութիւնների ժողով է, որի մասին ես ցիշատակութիւն արի և որի, իբր ուրախալի երևոյթի մասին, լրագիրները իւր ժամանակին հաղորդեցին:

Ապրիլի 15-ին, համաձայնութեամբ մի քանի խմբագրութիւնների, Թիֆլիսի ամբողջ մամուլի ներկայացուցիչները հրաւիրւած էին Կաւկազ հիւրանոցը, խորհրդակցելու համար թէ մամուլը ինչ դիրք պէտք է բռնի առաջիկայ ընտրութիւնների դիմաց: Մամուլի ներկայացուցիչների մի մասը, և սկզբում մեծագոյն մասը, այն տեսլենցիան էր ցոյց տալիս, թէ մամուլը պէտք է ներգործական դիրք բռնէ գործի մէջ և իւր մշակած անւանացուցակը ներկայացնէ ընտրողներին: «Մուրճ»-ի ներկայացուցիչը համաձայնւեց այդ

բանին, յարտարաբելով որ մի այդպիսի ժողով կարող է օգտակար լինել միայն այն դէպքում, եթէ նա սահմանափակի իւր դործը մողեր փոխանակելով ընտրողական գործի ընդհանուր սկզբունքների մասին, բայց ոչ թէ իւր ձեռքն առնելով անւանացուցակ կազմելը, քանի որ մամուլի այլ և այլ օրգանները միևնոյն ուղղութեան չեն պատկանում: Եւ իրօք ժողովը իւր երկու նիստերում մնաց ընդհանուր մողերի փոխանակութեան շրջանում, թէև մեծամասնութեան ցանկութետմբ ամեն մի հարցի մասին լինում էր քւէարկութիւն, որի հետևանքը արձանագրուում էր իրը «վճիռ» (պօտահովութիւն): Պարզ է, որ մողերի փոխանակութեան դէպքում մեծամասնութեան կարծիքները «վճիռներ» անւանելը մի հակասութիւն էր ժողովի նպատակին: Վճիռ անւանելը այն ժամանակ միտք կունենար, եթէ ամենքը համաձայնւեկին վճռից չշեղւել. բայց ինչպէս կարող է մամուլի մի օրգան, թողած իւր սեփական կարծիքները՝ գնալ մեծամասնութեան կամքով և ընդունել մի անւանացուցակ, որը կազմւած պիտի լինէր այդ օրգանի կողմից անընդունելի սկզբունքների համաձայն?

Եւ ահա, երրորդ նիստում, ինչպէս և սպասելի էր, ժողովը անցնում է արդէն կանդիդատների անւանացուցակ կազմելուն, հակառակ ցանկութեան մի քանի հայ օրգանների ներկայացուցիչների: Այդ պատճառով չորրորդ նիստից սկսած ժողովից իսպառ յետ կանգնեց մամուլի ներկայացուցիչների մի մասը, այն է՝ «Մուրճ», «Ճարագ», «Մշակ» և վրացական «Կւալի» թերթերը, իբր ոչ մասնակից կանդիդատների այն անւանացուցակ կազմելուն, որ ներկայացնելու կը լինի յիշեալ ժողովից: